ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«09» մայիսի 2015 թվական N 21 քաղաք Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 10-Ի ԹԻՎ 7 ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ, 5-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1918-Ն որոշմամբ հաստատված <<Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգի>> 4-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ ՄՍ/2598-15 գրությունը.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ

1. Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների կազմման աշխատանքները համակարգող Շիրակի մարզային հանձնաժողովի կազմում Մկրտիչ Կարապետյանի փոխարեն ընդգրկել Աշոտ Բաղդասարյանին:

2. Այդ կապակցությամբ՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2012 թվականի փետրվարի 10-ի <<Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների կազմման աշխատանքները համակարգող Շիրակի մարզային հանձնաժողով ստեղծելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2006 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ 122 կարգադրությունը ուժը կորցրած ճանաչելու մասին>> թիվ 7 կարգադրության հավելվածում <<ՄԿՐՏԻՉ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Շիրակի մարզային ստորաբաժանման ղեկավարի տեղակալ, անդամ>> բառերը փոխարինել <<ԱՇՈՏ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Շիրակի մարզային ստորաբաժանման ղեկավար, անդամ>> բառերով:

Ֆ. ՅՈԼԱԿՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է

Հավելված
Հայաստանի Հանրապետության Շիրակի
մարզպետի 2015 թվականի
մայիսի 04-ի թիվ 21 կարգադրության

ԿԱԶՄ
ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՍԽԵՄԱՆԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

ՖԵԼԻՔՍ ՑՈԼԱԿՅԱՆ	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետ, նախագահ,
ԱԼԲԵՐՏ ՄԱՐԳԱՐՅԱՆ	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ, անդամ,
ՄՈՎՍԵՍ ՄԱՆՈՒԿՅԱՆ	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ, անդամ,
ԿԱՌԼԵՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ,անդամ,
ՋՈՐԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի /մարզային հողային պետական տեսչություն/ պետ, անդամ,
ԺՈՐԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ	Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության քաղաքաշինական պետական տեսչության Շիրակի տարածքային բաժնի պետ,
ԼԵՎՈՆ ԳԱՍՊԱՐՅԱՆ	Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության բնապահպանական պետական տեսչության Շիրակի տարածքային բաժնի պետ, անդամ,
ԼԱՐԻՍԱ ԵԳԱՆՅԱՆ	Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության աշխատակազմի փորձագետ, անդամ,
ԱՎԵՏԻՔ ՄԵԼԻՔ-ՍԱՐԳՍՅԱՆ	Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության աշխատակազմի պատմական միջավայրի պահպանության Շիրակի մարզային ծառայության պետ, անդամ,
ԳԵՎՈՐԳ ՋԱՔԱՐՅԱՆ	Հայաստանի Հանրապետության Էներգետիկայի և բնական պաշարների նախարարության Էներգետիկայի պետական տեսչության հյուսիսային միջմարզային բաժնի պետ, անդամ,
ՋԻՎԱՆ ԱՍԼԱՆՅԱՆ	Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության <<Շիրակի գյուղատնտեսական աջակցության մարզային կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության տնօրեն, անդամ,
ԱՇՈՏ ԲԱԳԴԱՍԱՐՅԱՆ	Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Շիրակի մարզային ստորաբաժանման ղեկավար, անդամ